



Արամ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի սապիրանդ

ԼԻՉԻՆԳԱՏՈՒԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԻՄՆԱՄԵՆԳԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Քաղաքացիաիրավական պարտավորությունների կատարման սկզբունքներից է պարտավորությունների պատշաճ (բարեխիղճ) կատարման սկզբունքը, որի խախտումն անխուսափելիորեն պետք է հանգեցնի իրավական հետևանքների իրավախախտի համար: Ե. Կաբատովայի կարծիքով՝ պատասխանատվությունն այն առանցքն է, որի վրա հիմնվում է ցանկացած պայմանագիր¹: Պայմանագրային պարտավորությունների գերակշիռ մասի համար լիզինգատուի պատասխանատվությունը վրա է հասնում վարձակալության պայմանագրով վարձատուի պատասխանատվյանը համանմանորեն, ուստի քննության են առնվելու լիզինգատուի պատասխանատվության հետ կապված այնպիսի հարցեր, որոնք պայմանավորված են գուտ լիզինգային հարաբերությունների բնույթով:

Այսպես՝ նախևառաջ լիզինգի պայմանագրով լիզինգատուն պարտավոր է ձեռք բերել վաճառողից լիզինգի առարկան որպես սեփականություն և այն հանձնել լիզինգառուի տիրապետմանն ու օգտագործմանը: Մինևս ժամանակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգրք) 677-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է վարձատուն²:

Եվ այսպես՝ պատկերացնենք մի վիճակ, երբ լիզինգի պայմանագրի կողմերը, Օրենսգրքի 677-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, պայմանավորվում են, որ լիզինգատուն պետք է ձեռք բերի լիզինգի առարկա, որի անհատականացնող տվյալները, դրան ներկայացվող պա-

հանջներն ու չափանիշները, ինչպես նաև վաճառողի տվյալները նախատեսված են պայմանագրում: Լիզինգատուն ձեռք է բերում նախանշված տվյալներով լիզինգի առարկա, սակայն ոչ թե պայմանագրով նախատեսված վաճառողից, այլ մեկ ուրիշ վաճառողից: Այս դեպքում պարզ է, որ լիզինգատուն խախտել է պարտավորությունը (ոչ պատշաճ է կատարել այն վաճառողի ընտրության մասով), սակայն մյուս կողմից լիզինգի առարկային ներկայացվող որակական և այլ հատկանիշները լիովին համապատասխանում են լիզինգառուի պահանջներին, որոնք հենց վերջինիս կամահայտնությամբ ներառվել են պայմանագրում: Տվյալ պարագայում հարց է ծագում՝ արդյո՞ք լիզինգատուն պետք է կրի պատասխանատվություն:

Զննարկվող դեպքում ստեղծվում է մի վիճակ, երբ չնայած ֆորմալ առումով պայմանագրի կետի խախտված լինելուն (կոնկրետ վաճառողից գույք ձեռք բերելու մասով)՝ փաստացիորեն լիզինգառուն ստանում է պատշաճ պայմանագրի առարկա՝ նույն տեսակի, տարեթվի, նույն հնարավորություններով, որակական ու այլ հատկանիշներով և այլն: Հարց է ծագում՝ այս դեպքում ի՞նչ միջոցների կարող է դիմել լիզինգառուն, մասնավորապես՝ կարող է արդյո՞ք լիզինգառուն հրաժարվել լիզինգի առարկան ընդունելուց և պարտավորության պատշաճ կատարում պահանջել լիզինգատուից, ինչպես նաև պահանջել վնասներ, որոնք կարող են առաջանալ լիզինգառուի կողմից գույքը չընդունելուց հետո մինչև լիզինգատուի կողմից պայմանագրի պատշաճ կատարման պահը:

Մեր կարծիքով՝ այս դեպքում լիզինգառուի վերը նշված իրավունքը՝ հրա-

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2018 1 - 2 (223-224)

**ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն**

ժարվել լիզինգի առարկան ընդունելուց և պարտավորության պարզամ կարարում, ինչպես նաև վնասների հատուցում պահանջել լիզինգատուից, պետք է դիրարկել լիզինգատուի կողմից կոնկրետ վաճառողին մարմանը նախարակի համարեքարում՝ կարևորելով նաև նախապայմանագրային բանակցություններն անհրաժեշտության դեպքում. հնարավոր է, որ լիզինգատուն կոնկրետ վաճառողին մատնանշող պայմանագրային պայման առաջադրած լինել այն նկատառմամբ, որ տվյալ վաճառողի հետ հարաբերություններում իր համար ավելի հեշտ է ներկայացնել գնորդի կարգավիճակից բխող պահանջներ և այլն: Մեր համոզմամբ՝ սրեղծված իրավիճակում լիզինգատուի կողմից նշված իրավունքի իրացումը պետք է դիրարկել քաղաքացիական իրավունքներից բարեխղճորեն օգտվելու, ինչպես նաև իրավունքի չարաշահման արգելքի՝ սկզբունքային դրույքների համարեքարում: Հետևաբար, եթե վերը շարադրված դեպքում լիզինգատուն կոնկրետ վաճառողին նախատեսելիս հետապնդել է որոշակի նպատակներ՝ հետապնդելով գործարար և այլ ողջամիտ շահեր, ապա այլ վաճառողից լիզինգի առարկան ձեռք բերելու արդյունքում նրա շահերը խախտվում են, ուստի և այդ դեպքում իրավաչափ է նրան վերը նշված իրավունքների իրացման հնարավորություն ընձեռելը: Մինչդեռ, եթե լիզինգատուի համար ի սկզբանե որևէ նշանակություն չի ունեցել վաճառողի սուբյեկտը, այլ կարևորվել են միայն լիզինգի առարկայի իդենտիֆիկացիոն հատկանիշները, ապա լիզինգատուի կողմից նման իրավունքի իրացումը, փաստորեն, կկրի ձևական բնույթ՝ նկատի ունենալով առանձնապես այն, որ վաճառողը լիզինգային կառուցակարգում ունի ընդամենը դրվագային (ֆրագմենտալ) դեր: Լիզինգատուները, լինելով շուկայի առավել պրոֆեսիոնալ մասնակիցներ, կարող են նույն գույքի ձեռքբերման ավելի մատչելի տարբերակներ գտնել, և այս դեպքում

անհարկի կլինի նրանց նման «ֆորմալ» պատասխանատվության ենթարկելը: Ուշադրություն դարձնենք նաև Օրենսգրքի 681-րդ հոդվածին, որը լիզինգատուի համար նախատեսում է պարտականություն՝ լիզինգի առարկա գույքը ձեռք բերելիս վաճառողին ծանուցել, որ տվյալ գույքը նախատեսված է որոշակի անձի (լիզինգատուին) լիզինգով հանձնելու համար: Այստեղ կարող է հարց առաջանալ՝ ինչպիսի՞ իրավական հետևանքներ կարող են առաջանալ նման պարտականությունը չկատարելու արդյունքում: Ինչպես նշվում է, լիզինգատուն վաճառողին լիզինգում է լիզինգի առարկան լիզինգատուին փոխանցելը վաճառողի հանդեպ գույքի վճարման պարտականությունը կատարելու դիմաց, որի նպատակով էլ նախատեսված է, որ լիզինգատուն, ձեռք բերելով գույքը լիզինգատուի համար, պետք է ծանուցի վաճառողին այն լիզինգատուին լիզինգով հանձնելու նպատակի մասին: Այդպիսով՝ օրենսդիրը վաճառողին սայրիորի ղեկգացնում է լիզինգի առարկայի փոխանցման պարտականությունը ոչ թե գնորդ-լիզինգատուի, այլ գույքի ժամկետային տիրապետողի առաջ⁴: Հարկ է նաև նշել, որ Օրենսգրքի 681-րդ հոդվածը պատճառական ու տրամաբանական կապի մեջ է գտնվում Օրենսգրքի 684-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի կարգավորման հետ և, ըստ էության, կոչված է հենց սկզբնական փուլում վաճառողի համար երևան հանել այն սուբյեկտին (լիզինգատուին), որը հետագայում կարող է հանդես գալ տվյալ առուվաճառքի պայմանագրով որպես պահանջատեր: Ե. Վ. Կաբատովայի կարծիքով՝ ծանուցման բացակայության դեպքում վաճառողն իրավունք ունի վիճարկել լիզինգատուի պահանջները⁵: Նույն տեսակետին է հարում նաև Ա. Ե. Պրոտյեկովան⁶: Ի տարբերություն վերոնշյալ հեղինակների՝ Ա. Ա. Իվանովը գտնում է, որ ծանուցման բացակայությունը չի ազատում վաճառողին լիզինգատուի պահանջ-

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2018 1 - 2 (223-224)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



ներից. այդ դեպքում լիզինգատուն իր վրա է վերցնում վնասների առաջացման ռիսկը, որը կարող են կրել վաճառողը, լիզինգատուն և հենց լիզինգատուն ինքը ծանուցման բացակայության դեպքում⁷:

Վաճառողին գույքի ձեռքբերման նպատակի վերաբերյալ չծանուցելը ստեղծում է խնդրահարույց իրավիճակ. եթե այդ պարագայում լիզինգատուն առուվաճառքից բխող պահանջներ ներկայացնի վաճառողին (հատկապես՝ եթե լիզինգի առարկան լիզինգառուին հանձնի լիզինգատուն), ապա վերջինիս առարկություններն առ այն, որ ինքը սկզբնապես ծանուցված չի եղել գույքի հետագա ճակատագրի վերաբերյալ, կարող են որոշակիորեն տեղին և արդարացված լինել, քանի որ վերջինս պարզապես կարող է պնդել, որ ինքն առուվաճառքի պայմանագիրը կնքել է լիզինգատուի հետ, հետևաբար տվյալ պայմանագիրը կնքելիս պարտավորություններ է կրել (ինչպես նաև պատասխանատու է եղել) հենց լիզինգատուի առջև և եթե իմանար լիզինգառուի մասին, ապա կխուսափեր պայմանագիր կնքելուց: Սակայն մյուս կողմից, այս իրավիճակում խախտվում են լիզինգառուի իրավունքներն ու շահերը, քանի որ նրա պահանջների միակ հասցեատերը տվյալ դեպքում դառնում է լիզինգատուն՝ այդպիսով խախտելով լիզինգառուի առջև համապարտ պատասխանատվությունն անխտեսելու և այդպերպ լիզինգառուի իրավունքներն ավելի արդյունավետորեն պաշտպանելու՝ օրենսդրական նորմերի անխտեսման նպատակի տրամաբանությունը:

Մեր կարծիքով՝ այս դեպքում լիզինգառուի առջև վաճառողի պարասխանարվության հարցը պետք է կախման մեջ դնել նրանից, թե ով է անմիջականորեն հանչնել լիզինգի առարկան լիզինգառուին. եթե լիզինգի առարկան լիզինգառուին է հանչնել վաճառողը՝ Օրենսգրքի 682-րդ հոդվածի 1-ին կետի ընդհանուր իրավակարգավորմանը համապարասխան, և վերջինս կարող էր ող-

ջամբորեն իմանալ, որ գույքը հանչնվում է լիզինգառուին, ապա այս դեպքում նա չպետք է ազարվի պարասխանարվությունից, մինչդեռ եթե լիզինգի առարկան լիզինգառուին է հանչնել լիզինգատուն, ապա վաճառողը կարող է ազարվել նման պարասխանարվությունից՝ համապարասխան հիմնավորումներով:

Այսպիսով՝ անհրաժեշտ ենք համարում Օրենսգրքի 681-րդ հոդվածը լրացնել 2-րդ կետով առ այն, որ եթե լիզինգատուն չի կարարում ծանուցման իր պարտականությունը, ապա կրում է դրանից բխող բացասական հետևանքների ռիսկը. այդ դեպքում վաճառողն ազարվում է առուվաճառքի պայմանագրով լիզինգառուի առջև պարասխանարվությունից, եթե լիզինգատուն չի ապացուցում, որ վաճառողը ողջամբորեն կարող էր իմանալ գույքը լիզինգառուին լիզինգով օգրագործման նպարակով հանչնելու մասին:

Լիզինգատուի պատասխանատվության հիմնական առանձնահատկություններն ուրվագծված են Օրենսգրքի 684-րդ հոդվածում: Մասնավորապես, ըստ այդ հոդվածի՝ այն դեպքում, երբ վաճառող ընտրելու պատասխանատվությունը⁸ դրված է լիզինգատուի վրա, ապա առուվաճառքից բխող պահանջների առումով նա վաճառողի հետ հանդես է գալիս որպես համապարտ պարտապան (համապարտ պատասխանատվություն կրող կրող): Օրենքով անխտեսված համապարտության այս տեսակը պատկանում է նրանց թվին, որոնց հիմքը (պատճառը) և առիթը համատեղ գործողություններն են, որոնք հանգեցնում են պարտավորական իրավահարաբերության⁹:

Համապարտ պատասխանատվության մեխանիզմը տվյալ դեպքում կոչված է առավելագույնս պաշտպանել լիզինգատուի իրավունքները: Հարկ է նշել, որ այն իր հիմքում ունի Միջազգային ֆինանսական լիզինգի մասին 1988 թ. Օտտավայի կոնվենցիայի համապատասխան կարգավորումը, որում, չնայած ուղղակիորեն

չի հիշատակվում լիզինգատուի համապարտ պատասխանատվության մասին, սակայն նշվում է, որ լիզինգատուն չի ազատվում լիզինգատուի առջև պատասխանատվությունից, եթե լիզինգատուն կրում է վնասներ, որոնք հանդիսանում են վերջինիս կողմից լիզինգատուի փորձառությանը և կարծիքին ապավինելու հետևանք, ինչպես նաև լիզինգատուի կողմից սարքավորման վաճառողի և հատկորշումների ընտրության հարցում միջամտության հետևանք¹⁰:

Այնուամենայնիվ, նկատենք, որ լիզինգատուն և վաճառողը, չնայած որպես համապարտ պարտապաններ լիզինգատուի հետ հարաբերություններում նշված դեպքում դիտարկվում են հավասար կարգավիճակում գտնվող սուբյեկտներ, սակայն վերջիններս միմյանց միջև փոխհարաբերություններում չեն կարող դիտարկվել որպես այդպիսին: Այսպես՝ Օրենսգրքի 364-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, եթե այլ բան չի բխում համապարտ պարտապանների հարաբերություններից, ապա համապարտ պարտականությունը կատարած պարտապանը մնացած պարտապանների նկատմամբ ունի հավասար բաժիններով հետադարձ պահանջի իրավունք՝ հանելով իր բաժինը: Ընդհանուր առմամբ, նշված նորմը կոչված է վերացնելու փաստական վիճակի այն անհավասարակշռությունը, որն առաջանում է միևնույն կարգավիճակում գտնվող համապարտ պարտապաններից մեկի կողմից ամբողջ պարտավորությունը միայնակ կատարելու արդյունքում:

Պրոյեկտելով նշված ընդհանուր կարգավորումը լիզինգային հարաբերությունների վրա՝ փաստենք, որ եթե քննարկվող դեպքում լիզինգատուն առուվաճառքից բխող պահանջներ ներկայացնի լիզինգատուին՝ որպես համապարտ պարտապանի, և վերջինս ամբողջությամբ կատարի իր պարտականությունը, ապա ձեռք կբերի նաև հետադարձ պահանջի իրավունք վաճառողի նկատմամբ Օրենսգրքի 364-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթա-

կետի հիմքով, ինչը միանգամայն տրամաբանական է: Մինչդեռ, եթե նույն պայմաններում լիզինգատուն պահանջներ ներկայացնի վաճառողին, ու վերջինս բավարարի նրա պահանջները, ապա այս դեպքում վաճառողը չի կարող ունենալ հետադարձ պահանջի իրավունք, քանի որ մատնանշված դեպքում նրա կողմից պարտավորության կատարումն առաջին հերթին իր՝ որպես լիզինգի առարկայի, վաճառողի պարտականության կատարում է: Այլ կերպ՝ այս դեպքում սկզբունքորեն վաճառողի համար տարբերություն չկա, թե ում նկատմամբ է կատարում իր՝ որպես վաճառողի՝ պարտականությունները, իսկ համապարտ պատասխանատվության մեխանիզմը պարզապես ծառայում է որպես լիզինգատուի պահանջներն ավելի արդյունավետորեն բավարարելու համար նախատեսված կառուցակարգ: Ընդ որում՝ ուշադիր ուսումնասիրելով Օրենսգրքի 364-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի հիպոթեզն ու դիսպոզիցիան՝ կարող ենք եզրահանգել, որ որպես ելակետ ընդունվում է համապարտ պարտապանների հարաբերությունների էությունը, որից բխում է (որին ենթակա է) համապարտ պարտապանի՝ բավարարված պահանջի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքի առկայությունը: Իսկ համապարտ պարտապանների հարաբերությունների էությունը տվյալ դեպքում այն է, որ վերջիններս լիզինգային մեխանիզմում ունեն իրենց կոնկրետ պարտականությունները (հետևաբար նաև՝ պատասխանատվությունը) և նշված հարցում հավասար (համարժեք) սուբյեկտներ են միայն պահանջատիրոջ (լիզինգատուի) նկատմամբ ու վերջինիս կողմից նման պահանջներ ներկայացնելու պարագայում, այլ ոչ թե միմյանց հետ հարաբերվելիս:

Հնարավոր են նաև խնդրահարույց իրավիճակներ՝ կապված գուտ համապարտ պարտապան հանդես գալու հանգամանքի հետ:

Այսպես՝ պատկերացնենք մի իրավի-



ճակ, երբ լիզինգի պայմանագրով վաճառող ընտրելու պարտականությունը դրված է լիզինգատուի վրա, պայմանագրում նշված է լիզինգի առարկա սարքավորման, մեքենայի կոնկրետ մակնիշը, սակայն ներկայացված են մի քանի այլընտրանքային տարբերակներ: Մասնավորապես՝ այդ տարբերակներն իրենց հիմքում ունեն որոշակի տեխնիկական պարամետրեր (օրինակ՝ շարժիչի հզորություն, վազքի երկարություն, արտադրման տարեթիվ և այլն) ու այդ պարամետրերի տարբեր համակցությամբ մի քանի տարբերակներ են մատնանշված պայմանագրում, և լիզինգատուից պահանջվում է ընտրություն կատարել նշված տարբերակներից: Նման ընտրության հնարավորություն ընձեռելը հաճախ բավականին ողջամիտ է, ինչը փաստում է, որ լիզինգառուն կոնկրետ ցանկանում է ստանալ որոշակի գույք (դրա համար նշում է պայմանագրում գույքի տեսակը, մակնիշը), սակայն միևնույն ժամանակ հնարավորություն է ընձեռում շուկայում առավել մեծ փորձ, հմտություններ ունեցող լիզինգատուին կատարել ավելի ճիշտ ընտրություն առկա այլընտրանքային տարբերակներից: Ընդհանրապես՝ մեր կարծիքով՝ լիզինգի պայմանագրի դեպքում լիզինգի առարկա գույքի վերաբերյալ պայմանը՝ գույքի անհատականացման տվյալների **լրիվության, ամբողջականության** առումով, ի տարբերություն վարձակալության պայմանագրում վարձակալության առարկայի վերաբերյալ պայմանի, չպետք է համարել էական պայման և համապատասխանաբար գույքի **լրիվ** անհատականացման բացակայության դեպքում պայմանագիրը համարել չկնքված: Ի դեպ, մնանատիպ դիրքորոշում է արտահայտվել նաև Մոսկվայի արբիտրաժային դատարանի կողմից մի գործով, ըստ որի՝ լիզինգի պայմանագրում լիզինգի առարկայի վերաբերյալ անհատականորեն որոշակիացված հատկանիշների բացակայությունը հիմք չէ պայմանագիրը չկնքված լինելու հա-

մար. հարկ է որպես ելակետ ընդունել լիզինգային իրավահարաբերությունների առանձնահատկությունը, որը ենթադրում է լիզինգի առարկայի փոխանցում ապագայում, ինչը թույլ է տալիս սարքավորման լրացուցիչ անհատականացնող տվյալները (ի լրումն պայմանագրում նախատեսված տվյալների) ճանաչել որպես պայմանագրի առարկայի վերաբերյալ պայմանի բաղկացուցիչ մաս¹¹:

Տվյալ դեպքում հետագայում որակի առնչությամբ խնդիրներ առաջանալու պարագայում լիզինգատուի առջև պատասխանատու կլինեն համապարտության կարգով լիզինգատուն և վաճառողը: Այս դեպքում հարց կարող է առաջանալ՝ արդյո՞ք լիզինգատուն կարող է լիովին միայնակ, առանց վաճառողի հետ քննարկելու ընտրություն կատարել նշված այլընտրանքային տարբերակների միջև՝ նկատի ունենալով, որ հետագայում լիզինգառուի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում վաճառողը հանդես է գալու որպես համապարտ պարտապան (համապարտ պատասխանատվություն կրող), և դեռ ավելին՝ այդպիսի պահանջները հավանաբար հենց վաճառողին էլ կներկայացվեն:

Փաստորեն, այս դեպքում առկա է մուրբ վիճակ. այսպես, Օրենսգրքի 359-րդ հոդվածի համաձայն՝ պարտատիրոջն այս կամ այն գույքը հանձնելու կամ մի քանի գործողություններից որևէ մեկը կատարելու պարտականություն ունեցող պարտապանը դրանցից ցանկացածի ընտրության իրավունք ունի, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ պարտավորության պայմաններից: Ըստ այդմ՝ ղեկավարվելով նշված կարգավորմամբ՝ մի կողմից, լիզինգատուն ունի այլընտրանքային առարկաներից ցանկացածն ընտրելու օրինական հնարավորություն, մյուս կողմից, սակայն, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հետագայում վաճառողը հանդես է գալու որպես կոնկրետ լիզինգի առարկայի պարտավորությամբ համապարտ

պարտապան, որը ստիպված է լինելու կոնկրետ գույքին վերաբերող խնդիրներով լինել պատասխանատու: Միանգամայն այլ է իրավիճակն այն դեպքում, երբ լիզինգի պայմանագրում մատնանշվում է կոնկրետ լիզինգի առարկան՝ առանց այլընտրանքի հնարավորության, որի դեպքում հենց կոնկրետ այդ առարկան ձեռքբերելը լիզինգատուի պարտականությունն է, մինչդեռ վերը նշված դեպքում այլընտրանքային տարբերակներից մեկն ընտրելը լիզինգատուի՝ օրենքով ընձեռված հայեցողական իրավունքն է:

Տվյալ դեպքում, ինչպես նշվեց, գործ ունենք համապարտ պատասխանատվության (համապարտ պարտականությունների) հետ (պասիվ համապարտություն): Ինչպես իրավագիտքն նշվում է, պասիվ համապարտության նպատակը պարտատիրոջ շահերի բավարարման համար լրացուցիչ երաշխիքներ ընձեռելն է. այդ նպատակին ծառայելուց այն կողմ պասիվ համապարտության կառուցակարգը ծավալվել չի կարող¹²:

Ըստ այդմ՝ հենց նաև վերը նշված նպատակի համատեքստում գտնում ենք, որ եթե նշված դեպքում լիզինգատուն «ներքաշում է» վաճառողին համապարտ պարտականության մեջ, ապա պետք է ծանուցի վերջինիս բոլոր այլընտրանքային տարբերակների մասին, քանի որ վաճառողն այս դեպքում իրավունք ունի պատասխանատվություն կրել այն սպրանքի համար, որը նախընտրելի է համարում այլընտրանքային տարբերակներից, և դա, անշուշտ, կտեղավորվի պասիվ համապարտության կառուցակարգի՝ վերը մատնանշված նպատակներում: Իհարկե, այլընտրանքային տարբերակներից մեկն ընտրելը, այնուամենայնիվ, լիզինգատուի հայեցողական իրավունքի դաշտում է, սակայն վաճառողին բոլոր տարբերակների մասին ծանուցելը կնպաստի նաև ավելի պատշաճ որակի ապրանք ձեռք բերելու հարցում:

Հեղինակը՝ նպատակահարմար է Օրենսգրքի 681-րդ հոդվածի՝ առաջարկ-

վող փոփոխություններով բովանդակություն մեջ՝ 1-ին կետով, նախադասել, որ եթե առկա է լիզինգի այլընտրանքային առարկաներ ընտրելու հնարավորություն, ապա լիզինգատուն վաճառողին պետք է ծանուցի բոլոր այլընտրանքային տարբերակների մասին:

Այժմ քննության առնենք սպառողական նպատակներով լիզինգի դեպքում լիզինգատուի պատասխանատվության առանձնահատկությունները: Լիզինգային և վարկային կառուցակարգերի նմանությունը տնտեսագիտորեն ակնհայտ է, ինչն անխուսափելիորեն իր հետքն է թողնում լիզինգային հարաբերությունների իրավական կարգավորման վրա: ՀՀ իրավական համակարգում նշված երկու կառուցակարգերի միատեղումն առկա է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում, որի 2-րդ հոդվածը կրեդիտ է համարում նաև լիզինգը, որը կնքվում է բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար օգտագործման ենթակա գույքի առնչությամբ, ինչպես նաև գյուղատնտեսական նպատակներով՝ մինչև 2 մլն դրամի կամ դրան համարժեք արտարժույթի չափով: Հարկ է նշել, որ սպառողական լիզինգի կարգավորումը կրեդիտային (վարկային) հարաբերությունները կանոնակարգող նորմերով առկա է նաև մի շարք արտասահմանյան երկրներում, հատկապես՝ ընդհանուր իրավական համակարգի: Այսպես՝ Մեծ Բրիտանիայում սպառողական լիզինգի իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում է Սպառողական կրեդիտավորման մասին 1974թ. օրենքը (Consumer Credit Act), որը ընդհանուր առմամբ կարգավորում է սպառողական կրեդիտավորման հետ կապված հարաբերությունները¹³: Ավստրալիայում սպառողական լիզինգը գլխավորապես կարգավորվում է 3 ակտով. Սպառողական կրեդիտավորման պաշտպանության ակտային օրենքով (National Consumer Credit Protection Act 2009), Սպառողական կրեդիտավոր-



ման ազգային օրենսգրքով (the National Consumer Credit Code) և Սպառողական կրեդիտավորման պաշտպանության ազգային կարգավորումներով (the National Consumer Credit Protection Regulations 2010)¹⁴: Իսկ Սպառողական կրեդիտավորման մասին 23.04.2008 թ. թիվ 2008/48/EC Եվրոպական դիրեկտիվով կրեդիտավորման պայմանագրին հավասարեցնում է լիզինգի այն պայմանագրերը միայն, որոնք նախատեսում են լիզինգի առարկայի գնման պարտավորություն¹⁵:

Նախևառաջ փաստենք, որ սպառողական նպատակներով լիզինգի պարագայում լիզինգատուն ունի լրացուցիչ պարտականություններ, որոնք կրում է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան որպես կատարող (ծառայություն մատուցող), և համապատասխանաբար կրում է նաև այդ պարտականությունները չկատարելու արդյունքում պատասխանատվություն: Բացի այդ, «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նույնպես անդրադարձ է կատարվում լիզինգատուի (կրեդիտավորողի) պատասխանատվության հետ կապված հարցերին:

Այսպես՝ ըստ նշված օրենքի 20-րդ հոդվածի՝ կրեդիտավորողի ծառայություններից օգտվող սպառողի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում դատարանի վճռով կամ Ֆինանսական կարգի հաշտարարի որոշմամբ հօգուտ սպառողի բռնագանձվում է 300.000 դրամ: Մեր կարծիքով՝ տվյալ դեպքում կրեդիտավորողի (լիզինգատու) պատասխանատվությունը կանոնակարգող նշված նորմը խնդրահարույց է, ինչի հետևանքով կարող են պրակտիկայում խնդիրներ առաջանալ դրա կիրառման հետ կապված: Բերենք մի օրինակ. այսպես, նույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան

երեսնօրյա պարբերականությամբ, սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի:

Նշված նորմին համապատասխան՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28.07.2009թ. թիվ 229-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6.1 գլխով նախատեսվում է կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում սպառողին քաղվածքներ տրամադրելու ֆինանսական կազմակերպության պարտականությունը և այդ պարտականության իրականացման կարգը: Պրակտիկայում հաճախ է լինում, երբ որոշակի պարբերական ժամանակահատված ֆինանսական կազմակերպությունը քաղվածք չի ուղարկում սպառողին: Օրինակ, հնարավոր է մի վիճակ, երբ մեկ ամբողջ տարվա կտրվածքով կրեդիտավորողը որևէ քաղվածք ուղարկած չլինի սպառողին, չնայած պարտավոր էր 30 օրը մեկ ուղարկել մման քաղվածք: Այս դեպքում կարող է հարց առաջանալ, թե «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված 300.000 դրամ տուգանքը պետք է կիրառվի քաղվածք չտրամադրելու ցանկացած դեպքի առնչությամբ, թե՞ այդ ամբողջ ժամանակահատվածում քաղվածք չտրամադրելու բոլոր դեպքերը պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն, ու կիրառվի տուգանք բոլոր նշված դեպքերի համար միասին՝ 300.000 դրամի չափով: Տվյալ դեպք

քում ստացվում է, որ ֆորմալ առումով կրեդիտավորողը խախտել է վերը նշված պարտականությունը 12 անգամ, ուստիս պետք է ցանկացած դեպքի համար կրեդիտավորողից հոգուտ սպառողի բռնագանձել 300.000 դրամ, և շատ հնարավոր է, որ այդ պարագայում սպառողը (լիզինգառուն) կստանա իր ստացած կրեդիտի ամբողջական գումարն անգամ բազմակի գերազանցող գումար: Նման պայմաններում խոսք չի կարող գնալ սպառողի անհիմն հարստացման մասին, քանի որ նա այդ գումարները ստանում է՝ հիմքում ունենալով վերոնշյալ իրավական հիմքը, սակայն առերևույթ այստեղ խնդրահարույց է կրեդիտավորողի նման չհիմնավորված բարձր պատասխանատվության չափը, որն ակնհայտորեն արդարացված չէ:

Ինչպես նշում է Ե. Ա. Սուխանովը՝ քաղաքացիական իրավունքով կարգավորվող ապրանքադրամական հարաբերությունները կրում են համարժեքփոխհատուցողական բնույթ, և դրա հետ կապված՝ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը նույնպես ուղղված է տուժողին պատճառված վնասի համարժեք փոխհատուցմանը, իսկ դրա կիրառումը նպատակ ունի տուժողի գույքային վիճակի վերականգնմանը իրավախախտումից, այլ ոչ թե վերջինիս անհիմն հարստացմանը: Այստեղից էլ քաղաքացիաիրավական պատասխանատվության փոխհատուցողական բնույթը, որի չափը պետք է համապատասխանի տուժողի կրած վնասների չափին, այլ ոչ թե գերազանցի այն¹⁶: Քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմնական, գլխավոր գործառույթը փոխհատուցողական-վերականգնողականն է: Այն արտացոլում է իրավախախտի առաջացրած վնասների և պատասխանատվության կիրառվող միջոցների համաչափությունը, ինչպես նաև բռնագանձման ուղղվածությունը իրավախախտի կողմից տուժողի կրած գույքային կորուստների փոխհատուցմանը¹⁷:

Ինչպես վերը նշվեց, քաղաքացիաիրավական պատասխանատվությունը (այդ թվում՝ տուժանքը) բոլոր դեպքերում պետք է լինի համաչափ քաղաքացիական իրավախախտմանը, ինչպես նաև մյուս կողմին չընձեռնի այնպիսի առավելություններ, որոնք վերջինս չէր կարող ակնկալել պարտավորության առաջացման կամ գործողության ժամանակ՝ պարտավորությունների բնականոն ընթացքի պայմաններում, կամ որոնք ակնհայտորեն անհամաչափ են քաղաքացիական իրավախախտմանը: Քաղաքացիաիրավական պատասխանատվությունը գլխավորապես պետք է միտված լինի պարտավորական իրավահարաբերությունների մասնակիցների կարգապահության ամրապնդմանը՝ կատարելով ապահովիչ գործառույթ՝ անհրաժեշտ, բավարար ու համաչափ միջոցների կիրառմամբ: Այս իմաստով, ինչպես վերը նշված օրինակում է, վերոնշյալ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված տուժանքի գումարը, լինելով միանվագ գումար, ոչ բոլոր դեպքերում կարող է ծառայել իր էությանը: Ընդամեն, գործը քննող մարմնին (դատարան, Ֆինանսական համակարգի հաշտարար, արբիտրաժ) տվյալ նորմը չի տալիս հայեցողական լիազորություն գումարի այլ չափի կիրառելու առումով՝ սպառողի ցանկացած իրավունքի խախտման դեպքում պարտավորեցնելով կիրառել օրենքով նախատեսված տուժանքի գումարը: Իսկ մասնավորեցնելով նշվածը սպառողական լիզինգի վրա՝ հնարավոր է, որ լիզինգատուն վճարի տուժանքները, որից հետո սպառողը որևէ հիմքով հասնի պայմանագրի լուծմանը՝ հետ վերադարձնելով սպառողական նպատակներով տրամադրված գույքը: Արդյունքում, լիզինգատուն կրկնակի կտուժի, քանի որ մի կողմից ունի դրամական տուժանքների վճարման տեսքով ակտիվների անհամաչափ կորուստ, մյուս կողմից ունի գույքի իրացվելիության խնդիր: Նման իրավիճակն օրինաչափ չէ, ուստիս *անհրաժեշտ է սահմանել նշված օրենքի 20-րդ հոդվա-*

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2018 1 - 2 (223-224)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



ծում նախատեսված տրոժանթի չափի միջակայք, ինչպես նաև որոշակի չափանիշներ կիրառելիության հետ կապված:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ եզրահանգում ենք, որ մատնանշված առաջարկների նյութականացման և իրավա-

կան նորմերում ամրագրման դեպքում զգալիորեն կբարելավվի լիզինգատուի պատասխանատվությանն առնչվող խնդիրների իրավական կարգավորման որակը ՀՀ-ում:

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2018 1 - 2 (223-224)

ԴԱՏԱԿԱՆ Իշխանություն

- ¹ Տե՛ս Кабатова Е. В., Лизинг: правовое регулирование, практика, М. Инфра-М, 1998, էջ 75:
- ² Օրենսգրքի 677-րդ հոդվածի 2-րդ կետի ձևակերպումից կարող է տպավորություն ստեղծվել, որ եթե լիզինգի պայմանագրով ընտրությունը թողնվում է լիզինգատուի վրա, ապա վերջինս պետք է ընտրի և՛ գույքը, և՛ վաճառողին միաժամանակ, մինչդեռ պայմանագրում կարող է նշվել լիզինգի առարկան, իսկ վաճառողի ընտրությունը թողնվել լիզինգատուի վրա (հատկապես նկատի ունենալով, որ լիզինգի պայմանագրի՝ որպես վարձակալության պայմանագրի տեսակի համար էական պայման է որոշակի գույքի մասին պայմանը):
- ³ Նշված սկզբունքի բաղկացուցիչ տարր է սուբյեկտիվ իրավունքների նպատակային իրականացման հիմնադրույթը, այսինքն՝ սուբյեկտիվ իրավունքի ինքնանպատակ իրականացման քաջատուրը:
- ⁴ Տե՛ս Абрамов Ю. В., Правовое регулирование лизинговой деятельности в РФ. Диссертация на соискание ученой степени к.ю.н., Москва, 2014, էջ 78:
- ⁵ Տե՛ս Кабатова Е. В., նշված աշխատությունը, էջ 100:
- ⁶ Տե՛ս Прудникова А. Е., Лизинг как особый вид аренды. Диссертация на соискание ученой степени к.ю.н. Краснодар, 2003, էջ 59:
- ⁷ Տե՛ս А. А. Иванов, Договор финансовой аренды /лизинга/. Учебно-практическое пособие. М., 2001, էջ 46:
- ⁸ Մեր կարծիքով՝ տվյալ դեպքում լիզինգատուի վրա է դրվում ոչ թե վաճառող ընտրելու պատասխանատվությունը, այլ վաճառող ընտրելու *պարտականությունը*, ուստի անհրաժեշտ է այստեղ ճիշտ իրավական տերմին կիրառել:
- ⁹ Տե՛ս Белов В. А., Солидарность обязательств (общее учение и отдельные осложняющие моменты-альтернативность, обеспечение, перемена лиц, прекращение). Практика применения общих положений об обязательствах. Сборник статей. Москва 2011, (стр. 52-89), էջ 58:
- ¹⁰ Տե՛ս UNIDROIT Convention on International Financial Leasing. Ottawa, 28 May 1988 art. 8.1.a/:
- ¹¹ Տե՛ս Обобщение судебной практики, связанной с применением законодательства, регулирующего лизинговые правоотношения, Московский юрист, 2010, N 01, էջ 3:
- ¹² Տե՛ս Белов В. А., նշված աշխատությունը, էջ 68:
- ¹³ Տե՛ս Торрес Ортега И. В., Договор лизинга как структурно-сложное обязательство. Диссертация на соискание ученой степени к.ю. н., Москва, 2011, էջ 25:
- ¹⁴ Տե՛ս Paul Ali, Cosima McRae, Ian Ramsay and Tiong Tjin Saw. Consumer leases and consumer protection: Regulatory arbitrage and consumer harm: Australian business law review, Vol 41 N 5, էջ 242:
- ¹⁵ Տե՛ս Directive 2008/48/EC of the European Parliament and of the Council on credit agreements for consumers and repealing Council Directive 87/102/EEC, art. 2:
- ¹⁶ Տե՛ս Гражданское право. Под ред. Е.А. Суханова. М. Волтерс Клувер 2008, Том 1, Стр. 320:
- ¹⁷ Տե՛ս նշված աշխատությունը, էջ 321:

RESUME - РЕЗЮМЕ

THE PROBLEMS OF LESSOR'S LIABILITY IN THE RA

Aram Ghahramanyan
Phd student at YSU Chair of Civil Law

The article considers some problem issues of contractual liability of lessor. Several examples of breach of the obligations have been presented and we have revealed the inability of existing rules regarding sound regulation of lessor's liability in particular situations. In the light of the considered theoretical and practical sources we have proposed normative regulations that will contribute to improve the quality of regulatory framework concerning lessor's liability.

Keywords: lessor, leasing agreement, liability, notification, joint liability, consumer leasing

ПРОБЛЕМЫ ОТВЕТСТВЕННОСТИ ЛИЗИНГОДАТЕЛЯ В РА

Արամ Կաղրամյան
Аспирант кафедры гражданского права ЕГУ

В статье рассматриваются проблемные вопросы договорной ответственности лизингодателя. Изучив некоторые случаи нарушения обязательств, предусмотренных договором, нами была обнаружена несостоятельность действующих норм по надлежащему регулированию ответственности лизингодателя в рассмотренных нами ситуациях. Проанализировав профессиональную литературу и практические источники по теме, нами были предложены нормы регулирования ответственности лизингодателя, которые будут способствовать повышению его ответственности.

Ключевые слова: лизингодатель, договор лизинга, ответственность, уведомление, солидарная ответственность, потребительский лизинг

Բանալի բառեր - լիզինգատրոն, լիզինգի պայմանագիր, պարտախանարվորյուն, ծանուցում, հանարար պարտախանարվորյուն, պառոդական լիզինգ

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2018 1 - 2 (223-224)